ԱՐՄԱՆ ԲԵԳՈՅԱՆ

Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի ասպիրանտ, ՀՀ գլխավոր մասնագետ, «Հիլֆման» հոգեբանական ծառայություն

ՄԻՋԱՆՁՆԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՈԳԵԻՄԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄԸ

Հոդվածում ներկայացված է միջանձնային հարաբերությունների հոգեիմաստաբանական մոտեցումը, որը հիմնվում է Օ.Հարվիի, Դ.Հանթի ու Հ.Շրոդերի, ինչպես նաև Լ.Վիգոտսկու, Ա.Ն.Լեոնտև, Դ.Ն.Լեոնտևի, Վ.Նալիմովի և այլոց տեսական գաղափարների վրա: Միջանձնային հարաբերությունների հոգեիմաստաբանական մոտեցումը դրսևորվում է անձի կոնցեպտուալ համակարգի և գեշտալտ-կոնցեպտների, կոնցեպտուալ դիսոնանսի, ընդհանուր կոնցեպտուալ տարածության և կոնցեպտուալ ճկունության դրույթների միջոցով: Քննարկվում են նաև կոնցեպտուալ դիսոնանսի շտկման հիմնական ախտածին ռազմավարությունները՝ իրականության աղավաղումը, ֆորմալ տրամաբանության օրենքների և սկզբունքների աղավաղումը և նախորդող փորձի բացասումը:

Հանգուցային բառեր և արտահայտություններ. միջանձնային հարաբերություններ, անձի կոնցեպտուալ համակարգ, գեշտալտ-կոնցեպտ, կոնցեպտուալ դիսոնանս, կոնցեպտուալ ճկունություն, ընդհանուր կոնցեպտուալ տարածություն:

Միջանձնային հարաբերությունների հոգեբանական, հոգեթերապևտիկ և լեզվաբանական մի շարք տեսա-գործնական ուսումնասիրությունների և իմաստաբանական վերլուծության արդյունքում առաջ է քաշվել *միջանձնային հարաբերությունների հոգեիմաստաբանական տեսությունը*, որի կենտրոնական հայեցակարգային պատկերացումներն են *անձի կոնցեպտուալ համակարգը* և *գեշտալտ-կոնցեպտները*: Ընդ որում, տեսության շրջանակներում փորձ է արվում բացատրել և հիմնավորելու վարկածն այն մասին, որ միջանձնային հարաբերությունների ընթացքում փոխանակվող, միմյանց հետ շփվող, բախվող և փոփոխվող իմաստները, մարդու հոգեկանի իմաստային միավորները, հոգեկանում ներկայացված են (ռեպրեզենտացված են) **գեշտալտ-կոնցեպտների** տեսքով: Բացի դրանից, տեսության շրջանակներում զարգացվել և նկարագրվել են «ընդհանուր կոնցեպտուալ տարածություն», «կոնցեպտուալ համատեղելիություն», «կոնցեպտուալ ճկունություն» և «կոնցեպտուալ դիսոնանս» հասկացությունները:

«Անձի կոնցեպտուալ համակարգի» կոգնիտիվ տեսության հիմքերը

«Կոնցեպտուալ համակարգերի տեսությունը» (Conceptual Systems Theory), որպես անձի տեսություն, առաջին անգամ նկարագրել են Հարվին, Հանթն ու Շրոդերը՝ 1961 թվականին [72]: Այդ ժամանակից ի վեր կոնցեպտուալ համակարգը դիտարկվում էր միայն հումանիտար գիտության մակարդակում, սակայն վերջին ժամանակներս այն ուսումնասիրվում է նաև կոգնիտիվ գիտության և նեյրոգիտության մակարդակներում [58]:

Կոնցեպտուալ համակարգը տեսության հեղինակները նկարագրում են որպես սխեմա, որը տրամադրում է հիմք, որի միջոցով անհատը հարաբերվում է միջավայրային այն իրադարձությունների հետ, որոնցում ներգրավված է լինում վերջինս [72]:

Կոնցեպտուալ համակարգն ապահովում է և ուղեկցում բոլոր ճանաչողական գործընթացները, գիտելիքների յուրացման գործընթացները [74]: Կոնցեպտուալ համակարգն ապահովում է նաև

մտքում անցյալի իրադարձությունների վերակառուցումը, խոսքում՝ բառերի և նախադասությունների միջոցով ներքին իմաստների ճիշտ ներկայացումը, կոգնիտիվ գործընթացներում՝ անհրաժեշտ հասկացությունների կիրառությունը և այլն [72, 74]: Կոնցեպտուալ համակարգը կենտրոնական տեղ է գրավում նաև ուսուցման և զարգացման գործընթացներում [68, էջ 765]:

Անձի հոգեբանության, կոգնիտիվ լեզվաբանության, հոգեիմաստաբանության և հոգեթերապիայի վերջին տարիների տեսական և գործնական ուսումնասիրությունների լույսի ներքո և կոգնիտիվ գիտության մեթոդաբանության հիման վրա մեր կողմից զարգացվել և լրամշակվել է կոնցեպտուալ համակարգի ինտեգրատիվ տեսությունը, ավելի ճիշտ՝ «անձի կոնցեպտուալ համակարգի և գեշտալտ-կոնցեպտների տեսությունը», որն իր մեջ ներառում է նաև «աշխարհի պատկեր/մոդել», «կոնցեպտոսֆերա» և «կոնցեպտ» հայեցակարգերը [11]:

Հասկացույթային անցումը «Աշխարհի պատկերից» դեպի «անձի կոնցեպտուալ համակարգը»

Հոգեբանության մեջ գոյություն ունեցող բազմանշանակ «աշխարհի պատկեր» հասկացությունը հանդիպում է արևմտյան մի շարք հոգեբանների աշխատություններում, որոնցից ամենանշանակալին Կ.Գ.Յունգն է: Վերջինիս բնորոշմամբ աշխարհի պատկերը դինամիկ գոյացություն է, որն անընդհատ փոփոխվում է ինչպես և մարդու կարծիքն իր մասին: Ամեն մի նոր բացահայտում, ամեն մի նոր միտք, տեղեկատվություն նորանոր ուրվագծեր են հաղորդում անձի աշխարհի պատկերին [20, էջ 5]: Խորհրդային հոգեբանության մեջ «աշխարհի պատկեր»-ը հայտնվել է Ա.Ն.Լեոնտևի շնորհիվ: Վերջինս կապում էր այն ընկալման հիմնախնդրի հետ՝ նշելով, որ այն պետք է դրվի որպես «անհատի գիտակցության մեջ աշխարհի բազմաչափ պատկերի, իրականության կառուցման հիմնախնդիր: Այլ կերպ ասած՝ պատկերի (ընկալման) հոգեբանությունը կոնկրետ գիտական գիտելիք է այն մասին, թե ինչպես են անհատները գործունեության ընթացքում կառուցում աշխարհի պատկերը. աշխարհի, որում իրենք ապրում են, գործում, որն իրենք են վերափոխում և մասամբ էլ ստեղծում: Այն նաև գիտելիք է այն մասին, թե ինչպես է «աշխատում» (функционирует) աշխարհի պատկերը՝ միջնորդավորելով իրենց գործունեությունը օբյեկտիվորեն իրական աշխարհում» [34, էջ 254]: Ալեկսեյ Նիկոլաևիչ Լեոնտևի նշված դրույթներն իրենց զարգացումն են ստացել Դ.Ա.Լեոնտևի՝ անձի տեսության մեջ (“возможностная” теория личности), մասնավորապես՝ իմաստային կառույցների և իմաստային համակարգերի մասին դրույթներում [35]:

Ե.Յ.Արտեմևայի աշխատանքներում աշխարհի պատկերը հանդես է գալիս որպես մարդու և օբյեկտիվ իրականության փոխգործակցության հետքերի «ինտեգրատոր» [4; 5]:

Ժամանակակից ռուսական հոգեբանության տեսանկյունից աշխարհի պատկերը սահմանվում է որպես մարդու՝ աշխարհի, այլ մարդկանց, իր և իր գործունեության մասին պատկերացումների բազմամակարդակ համակարգ, որը «միջնորդավորում և բեկում է իրենով ցանկացած արտաքին ազդեցություն» [20, էջ 6]: Աշխարհի պատկերի էության վերաբերյալ Օ.Ա.Բոգպոմաչովան նշում է, որ «աշխարհի պատկերը գեներացվում է բոլոր ճանաչողական գործընթացների կողմից, հանդիսանալով այդ իմաստով դրանց ինտեգրալ բնութագրիչը [20, էջ 6]: Ընդ որում, աշխարհի պատկերը ոչ թե գործիքների, հնարների և ծրագրերի հավաքակազմ է, այլ կենդանի սկիզբ, որն անընդհատ փորձարկվում է գործունեության մեջ աշխարհին իր համարժեքությունը հաստատելու համար:

Ս.Դ.Սմիրնովի բնորոշմամբ աշխարհի

պատկերը անձի գիտելիքների կազմակերպման համապարփակ ձև է, որը որոշում է ճանաչողության և վարքի կառավարման հնարավորությունները [49; 50]: Գ.Ա.Բերուլավայի կարծիքով՝ աշխարհի պատկերը մարմնավորվում է մարդու վարքի կայունության մեջ՝ դրսևորվելով կոնկրետ գործողություններում, արարքներում և գնահատականներում [19]:

Աշխարհի պատկերը՝ որպես հոգեկան և վարքային իրականություն, ուսումնասիրվում է նաև հոգեբեզվարանության, մասնավորապես կոգնիտիվ լեզվաբանության մեջ, որի շրջանակներում տարբեր հետազոտողներ տարբեր կերպ են այն կոչում: Օրինակ՝ Դ.Ս.Լիխաչևը անվանում է այն «կոնցեպտոսֆերա», Ռ.Ի.Պավիլյոնիսը՝ «կոնցեպտուալ համակարգ», Ն.Ս.Բոլոտնովան՝ «կոնցեպտուալ կառույց» և այլն [համաձայն 40, էջ 82]: Կիրառվում է նաև «աշխարհի մոդել» եզրույթը [40, էջ 82], սակայն, ելնելով մեթոդաբանական և ստուգաբանական պատկերացումներից, սույն աշխատանքի շրջանակներում կիրառվելու է «կոնցեպտուալ համակարգ» եզրույթը:

Անձի կոնցեպտուալ համակարգի էությունը

Անձի կոնցեպտուալ համակարգը մենտալ (մտավոր-հոգեկան) միավորների համակարգված ամբողջություն է, սուբյեկտի կողմից արդեն իսկ արտացոլված, ճանաչված իրականություն, որն էլ կազմում է մտածողության և գիտակցության տեղեկատվական հիմքը [44, էջ 42]:

Անձի կոնցեպտուալ համակարգը (այսուհետ՝ ԱԿՀ) սուբյեկտի ներքին և արտաքին աշխարհների, սուբյեկտային-սուբյեկտիվի և սուբյեկտային-օբյեկտիվի մեկնաբանումն է, բազմամակարդակ և ամբողջական հասկացումը, այդ իսկ մեկնաբանությունների նկատմամբ որոշակի հուզական վերաբերմունքն ու դրանց կոգնիտիվ գնահատականը (կոգնիտիվ-աֆեկտիվ բաղադրիչ), ինչպես նաև կենսագործունեության կազմակերպումը այդ իսկ մեկնաբանություններին համապատասխան (վարքային բաղադրիչ):

ԱԿՀ-ի էությունը չի սահմանափակվում լոկ մեկնաբանությունների համակարգով կամ անձնավորության առանձին կոգնիտիվ-աֆեկտիվ-վարքային կառույցներով: ԱԿՀ-ն ներառում է անձի ողջ ներաշխարհը, նրա մտքերը և իմացությունը, նրա վերաբերմունքը, հույզերն ու ապրումները, իդեալներն ու երազանքները, վարքային մոդելներն ու պատերները [11]: ԱԿՀ-ն համակարգ է, որը ներկայացնում է անձնային փորձի բոլոր կողմերը ներառյալ՝ դիրքորոշումները, իրադարձությունները, օբյեկտները, գործողությունները, հուզական և հոգեկան վիճակները [58]:

ԱԿՀ-ն հոգեիմաստաբանական տարածություն է, հասկացական համակարգ, բազմաչափ մենտալ քարտեզ այն ամենի, ինչը գտնվում է «իմ ներսում», «ինձանից դուրս» և «ինձանից անդին»: ԱԿՀ-ն՝ անձի սեփական աշխարհն է, որտեղ գործում են մտածողության և վարքի սեփական կանոնները, որտեզ գոյություն ունեն կյանքի իմաստի և նպատակի, սոցիալական նորմերի, երևույթների, արժեքների, առանձին մարդկանց, հասարակության, տիեզերքի և այլնի սեփական յուրահատուկ հասկացումը: ԱԿՀ-ն այն աշխարհն է, որտեղ ամեն օբյեկտ (առարկա, երևույթ, իրավիճակ և այլն) ունի անձնավորության կողմից «նշանակված» իր յուրահատուկ իմաստն ու նշանակությունը. աշխարհ, որտեղ պատճառա-հետևանքային կապերը, դրանց տրամաբանությունը նույնպես անձնավորությունն ինքն է ստեղծում: ԱԿՀ-ն անձնավորության առաջին և վերջին, միակ և անփոխարինելի իրականությունն է [11]:

Բնականաբար, ԱԿՀ-ն հնարավոր չէ դիտարկել անձի գիտակցությունից և գործունեությունից առանձին, քանի որ վերջինս հենց անձի ակտիվության և գլխավոր պայմանն է և հիմնական արդյունքը: Եվ դեռ ավելին, ԱԿՀ-ն կեցություն է, որը սուբյեկտիվորեն հենց անձն

է, որ կա: Ռուբինշտեյնյան փիլիսոփայության լեզվով ասած՝ կեցությունը շրջապատում է մեզ բոլոր կողմերից և ոչ մի տեղ չենք կարող նրանից փախչել, քանի որ մենք ինքներս ենք այդ կեցությունը: «Կեցության աշխարհը, որում մենք գտնվում ենք, վերջինիս անմիջական տրվածությունն է, անխուսափելիությունը, ակնհայտությունը, բոլոր կողմերից մեզ պատող վերջինիս անբացառելիությունը և անդարձելիությունը» [45, էջ 269]: ԱԿՀ-ն ներկայանում է նաև, որպես անհատականության հիմնական բնութագրիչ. «Անհատականությունը բացատրվում է այն փաստի օգնությամբ, որ յուրաքանչյուր ինքնաներկայացվող սուբյեկտիվություն կենտրոնացած է ինքն իր վրա և պատկերացնում է աշխարհը որպես ամբողջություն՝ իրեն ներհատուկ միջոցով» [52]: Ի.Գ.Մալկինա-Պիխն, անդրադառնալով երևույթին, հետևյալ կերպ է բնութագրում այն. «Յուրաքանչյուր մարդ մշակում է աշխարհի սեփական յուրահատուկ մոդելը՝ ելնելով գենետիկերեն պայմանավորված գործոնների և սեփական փորձի համադրությունից: «Մոդելն» այդ ներառում է բոլոր ապրումները և այդ ապրումներին վերաբերող բոլոր ընդհանրացումները, ինչպես նաև այն բոլոր կանոնները, համաձայն որոնց՝ կատարվում են այդ ընդհանրացումները: Այդ մոդելի որոշ մասեր ֆիզիոլոգիական զարգացման և նոր փորձի ձեռքբերման հետ մեկտեղ կրում են որոշ փոփոխություններ, միևնույն ժամանակ, այդ նույն մոդելի այլ մասեր հանդես են գալիս որպես ռիգիդ և մնում անփոփոխ» [39, էջ 59]: Եվ բնականաբար, ԱԿՀ-ն պայմանավորում է ոչ միայն մարդու վարքը, այլ նաև որոշակիորեն պայմանավորում է նպատակադրումը և պահանջմունքադրդապատճառային համակարգը, չնայած որ հարկ է նշել, որ վերջիններիս փոխազդեցությունը դիալեկտիկական է: Այս տեսանկյունից տեղին է Վ.Ե.Կեմերովի արտահայտությունն այն մասին, որ «Անձնավորության աշխարհընկալումը դառնում է ասես սոցիալական տարածության երկրաչափություն, որը պայմանավորում է անհատի հնարավոր վարքի վեկտորը՝ այս կամ այն իրավիճակում» [31, էջ 166]:

Անձի կոնցեպտուալ համակարգի կառուցման և վերակառուցման հիմնական առանձնահատկությունները

ԱԿՀ-ն, իհարկե, չի կարող լինել բնածին. այն կառուցվում և զարգանում է անձնավորության զարգացմանը զուգընթաց՝ շրջակա միջավայրի հետ ակտիվ փոխազդեցության արդյունքում՝ առարկայական գործունեության, շփման և հաղորդակցման միջոցով [36, էջ 242-271; 22, էջ 110]: Մարդը, զարգանալով որպես անձնավորություն, ներքին պլանում կառուցում է կոնցեպտների համակարգ [47; 48]:

Դեռ IV աստվածաբան Բարսեղ Կեսարացին նկատել էր, որ ցանկացած իրականություն կարող է ծնել մեկ այլ իրականություն, որի գոյության օրինաչափությունները կարող են չհամապատասխանել իրեն ծնած իրականության առանձնահատկություններին [40, էջ 172]: Այս առումով ԱԿՀ-ն հենց այն իրականությունն է, որը ծնվում է օբյեկտիվ իրականությունից և որի առանձնահատկությունները դրսևորվում են արդեն իսկ մանկական տարիքում՝ պայմանավորելով սոցիալական իրականության ընկալման և ընդհանրապես ճանաչողության էությունն ու ուղղվածությունը [6; 8; 9]:

Ողջ կյանքի ընթացքում անձը հատիկ առ հատիկ, գիտակցաբար և անգիտակցաբար կառուցում է աշխարհի իր պատկերը, իր կոնցեպտուալ համակարգը՝ սոցիալականացման գործընթացում աստիճանաբար ներքնայնացնելով այն ամենը, ինչը գտնվում է իրենից դուրս, ինչպես նաև կիսվելով իրեն շրջապատող մարդկանց հետ այն ամենով, ինչը գտնվում է իր ներսում. միայն միջանձնային հարաբերություններում փոխադարձ ինքնաբացահայտման պարա-

գայում է հնարավոր դառնում ԱԿՀ-ի զարգացումը [56]: Ճանաչողության գործընթացների միջոցով մարդը աստիճանաբար ներքնայնացնում է օբյեկտիվորեն գոյություն ունեցող աշխարհը՝ բեկելով այն իր սեփական անձով [11]: Հենց շրջապատող աշխարհի հետ փոխազդեցության մեջ, ակտիվ սոցիալական հարմարման, սոցիալականացման գործընթացում է, որ մարդը կառուցում իր սեփական կոնցեպտուալ համակարգը: Վերջինս, օբյեկտիվի սուբյեկտիվ ներկայացվածությունը լինելով հանդերձ, անձի կողմից ընկալվում է, ապրվում է որպես օբյեկտիվ, որովհետև այս պարագայում «գոյություն ունի ոչ թե դիտում և իր առարկան որպես իդեալական հարաբերություն, այլ մարդու իրական փոխազդեցություն արտաքին նյութական աշխարհի հետ» [45, էջ 354]:

Շրջակա միջավայրի հետ ակտիվ փոխազդեցությունը, հետևաբար և ԱԿՀ-ի կառուցումն ու զարգացումը սկսվում է դեռ նորածնության շրջանից՝ շնորհիվ մոր և նորածնի միջև կապվածության առաջացման նեյրոկենսաբանական մեխանիզմների, որոնցից ամենակարևորներն են օքսիցոտիներգիկ և դոպամիներգիկ համակարգերը [57, 79, 81]:

Ինչպես նշվեց քիչ վերևում, ԱԿՀ-ի զարգացումը, կառուցումն ու վերակառուցումը ընթանում է անձի զարգացմանը զուգահեռ: Լ.Վիտգենշթայնը (Ludwig Wittgenstein) պնդում էր, որ մարդու առջև ծառացող կենսական խնդրի լուծումը՝ կենսակերպի մեջ է, որն էլ և բերում է նրան որ պրոբլեմայնությունը վերանում է: Կյանքի պրոբլեմայնությունը հետևանք է այն բանի, որ մարդու կյանքը չի համապատասխանում կյանքի «ձևին»: Այս պարագայում, Վիտգենշթայնի համոզմամբ, մարդը պետք է փոխի և հարմարեցնի իր կյանքն այդ ձևին [23, 27]: Այսինքն՝ կենսական խնդիրները ի հայտ են գալիս այն ժամանակ, երբ անձի կոնցեպտուալ համակարգը, դրանում ներկայացված կյանքի «ձևը» չի համապատասխանում կյանքի իրական «ձևին»: Եվ որ պրոբլեմայնության հաղթահարման համար անհրաժեշտ է վերափոխել կենսակերպով դրսևորվող սուբյեկտիվ «ձևը»՝ համապատասխանեցնելով այն կյանքի իրական «ձևի» հետ: Այստեղից հետևում է, որ անձի ներդաշնակ և համարժեք զարգացումը ենթադրում է և միահյուսված է կեցության հիմնադրույթի, անձի կոնցեպտուալ համակարգի կառուցման և մշտական կարգավորման շարժուն գործընթացին:

Կրկին պետք է նշենք, որ անձի համար աշխարհի իր պատկերը, իր կոնցեպտուալ համակարգը ընկալվում, ապրվում է որպես միակը և օբյեկտիվը: Չնայած այն փաստին, որ մարդն ունակ է ռեֆլեքսիվության շնորհիվ գիտակցելու իր սուբյեկտիվությունը, սակայն գործնականում դա քիչ է շոշափում անձի կոնցեպտուալ համակարգը: Այս առիթով Ս.Լ.Ռուբինշտեյնը գրում է. «Եվ իր և ուրիշների համար «Ես»-ը օբյեկտիվորեն հանդես է գալիս առաջին հերթին որպես ոչ թե ճանաչողության սուբյեկտ, այլ որպես մարդու կոնկրետ իրականություն» [45, էջ 267]:

ԱԿՀ-ի ակտիվ զարգացմանն ու անընդհատ վերակառուցմանը նպաստում է բոլոր մարդկանց բնորոշ յուրահատուկ սոցիալական կողմնորոշումը [78] և անորոշությամբ պայմանավորված անձնային տագնապի [63; 64; 69; 71] նվազեցման նպատակով միջանձնային հարաբերություններում ներգրավվելը, ինչպես նաև այդ իսկ հարաբերություններում ծագող անորոշության նվազեցման պահանջով պայմանավորված [62] ակտիվ միջանձնային ճանաչողությունը: ԱԿՀ-ի ակտիվ վերակառուցումը պայմանավորված է լինում կոնցեպտուալ դիսոնանսներով, միջանձնային հարաբերություններում՝ հակասությունների կամ հակասող և հակընդդեմ միտումների անդադար փոխազդեցություններով [59; 76], միջանձնային հաղորդակցման տարաբնույթ խաթարումներով [77]:

Անձի կոնցեպտուալ համակարգի ուսումնասիրության հիմնական սկզբունքները

ԱԿՀ-ն, լինելով բազմաչափ հոգեկան ամբողջություն, անկասկած ներառում է նաև իր մեջ Ես-հիմնադրույթը: ԱԿՀ-ն այս տեսանկյունից հանդես է գալիս որպես Ես-հիմնադրույթի և Ոչ-Ես-հիմնադրույթի (այն ամենը, ինչ «Ես»-ից դուրս է և վերջինիս մաս չէ կազմում) յուրահատուկ միացություն: Գլոբալ առումով անձի կոնցեպտուալ համակարգն իր էությամբ գեշտալտ է, որն ինքն իրենով նույնպես ոչ այլ ինչ է, քան գեշտալտների (գեշտալտ-կոնցեպտների) համակարգ: Այդ իսկ պատճառով ԱԿՀ-ի ուսումնասիրությունը նույնպես պետք է լինի համակարգային և հոլիստիկ:

ԱԿՀ-ի ուսումնասիրության ընդհանուր գիտական հիմքն են կազմում գիտության երեք կարևոր մեթոդաբանական բացահայտումներ, որոնք ներկայացված են Վ.Պ.Ռուդնևի «Հեռու իրականությունից. տեքստի փիլիսոփայության ուսումնասիրություններ» («Прочь от реальности: Исследования по философии текста») գրքում [46, էջ 9]: Ստորև ներկայացնում ենք դրանք.

1. Օբյեկտիվ իրականությունը լայն է և խորն է իրեն նկարագրող ցանկացած համակարգից կամ այլ կերպ ասած՝ «մարդու մտածողությունը հարուստ է իր (մտածողության) դեդուկտիվ ձևերից» [41, էջ 72]: Այս սկզբունքը ապացուցել է Կ.Գյոդելը՝ դեդուկտիվ համակարգերի անկատարության թեորեմում [70]:

2. Այդ իսկ պատճառով, իրականության ցանկացած օբյեկտ համարժեք նկարագրելու համար անհրաժեշտ է որպեսզի այն ներկայացվի երկու հակադիր նկարագրական համակարգերում: Սա լրացման սկզբունքն է, որը ձևակերպել է Ն.Բորը քվանտային մեխանիկայում [21], որն այնուհետև տեղափոխվել է գիտության մյուս բնագավառներ [37]:

3. Հնարավոր չէ միաժամանակ հավասարաչափ ճշգրիտ կերպով նկարագրել երկու փոխկախված օբյեկտներ: Սա Վ.Հեյզենբերգի, այսպես կոչված, անորոշությունների հարաբերության հասկացման ընդլայնված տարբերակն է, որն ապացուցում է տարրական մասնիկի կոորդինատների և իմպուլսի միաժամանակյա չափման անհնարինությունը [26]: Այս սկզբունքի փիլիսոփայական տարբերակը ձևակերպել է Լ.Վիտգենշթայնն իր «Հավաստիության մասին» աշխատությունում՝ նշելով, որ ինչ-որ բան կասկածի տակ դնելու համար անհրաժեշտ է, որ այն միևնույն ժամանակ լինի կասկածից դուրս [46, էջ 9]:

Հարկ է նշել նաև, որ ԱԿՀ-ի ուսումնասիրության, նկարագրության և ներկայացման համար կարելի է կիրառել «անձի իրականությունների համակարգը» [7; 8] և Ֆ.Կասպարի կողմից մշակված «պլանների վերլուծությունը» (Plan Analysis)՝ ԱԿՀ-ի զարգացման սցենարներն ուսումնասիրելու համար [66]:

Գեշտալտ-կոնցեպտների կոգնիտիվ տեսության հիմքերը

Միջանձնային հարաբերությունների ընթացքում փոխանակվող, միմյանց հետ շփվող, բախվող և փոփոխվող իմաստները, մարդու հոգեկանի իմաստային միավորները, հոգեկանում ներկայացված են (ռեպռեզենտացված են) գեշտալտ-կոնցեպտների տեսքով: Վերջիններս ԱԿՀ-ի հիմնական բաղադրիչներն են: Գեշտալտ-կոնցեպտները, յուրահատուկ հատկություններով օժտված, մարդու հոգեկանի կառույցներ/կոնստրուկտներ են:

Համաձայն Ե.Ս.Կուբրյակովայի՝ կոնցեպտը՝ մարդու մենթալ բառապաշարի հիշողության, աշխարհի ընդհանուր պատկերի, գլխուղեղի կոնցեպտուալ համակարգի միավորն է՝ արտացոլված մարդկային հոգեկանում [32, էջ 90 – համաձայն 40, էջ 47]: Վ.Ն.Տելիայի կարծիքով՝ կոցեպտը իդեալական երևույթ է, որը մարդկային մտքի արդյունք է, հետևաբար այն բնորոշ է ոչ միայն լեզվական գիտակցությանը, այլ գիտակ-

գությանն ընդհանրապես: Կոնցեպտը կառույց է, որը ոչ թե վերաստեղծվում է այլ վերակառուցվում է իր լեզվական արտահայտման և արտալեզվական գիտելիքի միջոցով [51 – համաձայն 40, էջ 49]:

Գոյություն ունեն նաև կոնցեպտի այլ սահմանումներ, որոնք հնարավորություն են տալիս առանձնացնելու վերջինիս հետևյալ առանձնահատկությունները. 1) այն մարդկային փորձի նվազագույն միավորն է՝ ներկայացված վերջինիս հոգեկանում, 2) այն գիտելիքների մշակման, պահպանման և փոխանցման հիմնական միավորն է, 3) կոնցեպտ ունի շարժական սահմաններ և կոնկրետ գործառույթներ, 4) կոնցեպտը սոցիալական է: Այս ամենից հետևում է, որ կոնցեպտները ներկայացնում են մարդու գլխում, հոգեկանում ողջ աշխարհը՝ այդպիսով իսկ կազմելով նրա կոնցեպտուալ համակարգը [40, էջ 50]:

Կոնցեպտի էության վերաբերյալ կարելի է առանձնացնել հետևյալ կարևոր կետերը՝

· կոնցեպտը կոնցեպտոսֆերայի, անձի կոնցեպտուալ համակարգի (հեղինակի ճշգրտում – Ա.Բ.), միավորն է [44, էջ 19].

· եթե նշանակությունը լեզվական գիտակցության միավորն է, ապա կոնցեպտը՝ կոգնիտիվ (44, էջ 19], իսկ Տելիայի կարծիքով՝ գիտակցության ընդհանրապես [51 – համաձայն 40, էջ 49]

· կոնցեպտի մի մասն է կազմում նշանակությունը, որն ամրագրված է լեզվական նշանով՝ հաղորդակցման նկատառումներով [44, էջ 19].

· կոնցեպտը իրականության արտացոլանքն է (օբյեկտիվ և սուբյեկտիվ): Կոնցեպտը, որպես կոգնիտիվ երևույթ, իրենից ներկայացնում է իրականության արտացոլման և ճանաչողության արդյունք [44, էջ 92]:

· Մարդու մտածողությունն իրականացվում է համապարփակ ծածկագրի միջոցով: Մարդիկ մտածում են կոնցեպտներով, որոնք ծածկագրվում են այդ համապարփակ ծածկագրի միջոցով և կազմում են դրա առարկայական հիմքը [24; 40, էջ 49].

· կոնցեպտն ավելի ծավալուն է, քան բառի լեքսիկական նշանակությունը [40, էջ 93].

· կոնցեպտը՝ մարդու վարքի ներքին դետերմինանտն է [72]:

Զ.Դ.Պոպովան առանձնացնում է կոնցեպտների հատուկ տեսակ՝ գեշտալտները: Վերջիններս մեծ հետաքրքրություն են ներկայացնում հոգեբանության համար (մասնավորապես անձի հոգեբանության և կոգնիտիվ հոգեբանության), քանի որ ավելի լավ են արտացոլում կոնցեպտների հոգեբանական էությունը: «Գեշտալտը՝ համալիր, ամբողջական ֆունկցիոնալ մտածական կառույց է, որը գիտակցության մեջ համակարգում է առանձին երևույթների բազմազանությունը: Գեշտալտն իրենից ներկայացնում է զգայական և ռացիոնալ տարրերը համատեղող, ինչպես նաև օբյեկտի և երևույթի դինամիկ և ստատիկ ասպեկտները միավորող ամբողջական մտապատկեր» [44, էջ 119]: Այս առումով, որպես հոգեկանի առանձնահատկություն և դրսևորում առավել իրական են, ինչպես նաև հոգեբանական հետազոտության օբյեկտ որպես կարող են հանդիսանալ հենց գեշտալտները: Տերմինաբանական խառնաշփոթից խուսափելու (հոգեբանության մեջ երբեմն «գեշտալտը» կիրառվում է նաև այլ իմաստներով), գեշտալտների էությունն առավել ընդգծելու (այն որ դրանք կոնցեպտուալ բնույթ ունեն և հանդես են գալիս, որպես ԱԿՀ միավոր), ինչպես նաև կոնցեպտների տեսության նկատմամբ հոգեբանության մոտեցման առանձնահատկությունը շեշտելու համար (այն որ դրանց բնորոշ են գեշտալտ հոգեբանության շրջանակներում մշակված «գեշտալտի» հիմնական սկզբունքները) մեր կողմից կիրառվում է «գեշտալտ-կոնցեպտ» (Gestalt-concept) եզրույթը:

Գեշտալտ-կոնցեպտների էությունը

Ինչպես արդեն նշվել էր, գեշտալտ-կոնցեպտները մաս են կազմում ԱԿՀ-ի: Այդ իսկ պատճառով ԱԿՀ-ի, որպես առավել բարձր մակարդակի գեշտալտի, հասկացման ճանապարհին ընկած է գեշտալտ-կոնցեպտների մանրակրկիտ ուսումնասիրության և առանձնահատկությունների վերլուծության անհրաժեշտությունը [14]:

Ճանաչողության տեսանկյունից գեշտալտ-կոնցեպտը միավորում է իր մեջ ճանաչողական գործողություններում (կոնկրետ իմաստին, իմաստային ամբողջությանը վերաբերող) առաջացող կոնկրետ հոգեվիճակը կամ հուզական ապրումը (*Emotional State, Emotional Experience*), այդ հոգեվիճակին տրվող գնահատականը կամ պիտակը (*Mark/ Appraisal*) և պատկերացումը կամ իմաստային դիրքորոշումը (*Belief*): Ճանաչողության կոնկրետ գործընթացի արդյունքում, կոնկրետ փորձի ձեռքբերումից հետո, գեշտալտ-կոնցեպտը ասոցիատիվորեն կապվում է կոնկրետ իրավիճակի (*Activating Situation*) և դրան ի պատասխան տրվող հակազդման կամ դրա արդյունքում առաջացած մտահանգման և կամ հույզի հետ (*Consequence*) [12; 14]: Կառուցվածքային տեսանկյունից՝ այն բաղկացած է կոգնիտիվ, հուզական և վարքային բաղադրիչներից:

Առավել լայն՝ գեշտալտ-կոնցեպտը որոշակի հոգեկան համակարգ և կառույց է, որն օժտված է կոնկրետ գնոսիոլոգիական և սոցիալական բովանդակությամբ, դերային և նպատակային կողմնորոշմամբ, ինչպես նաև որոշակի ինքնուրույնությամբ, որն էլ և դրսևորվում է ինտենցիոնալության և օբսեսիվության տեսքով [14]:

Յուրաքանչյուր կոնկրետ գեշտալտ-կոնցեպտ մարդու հոգեկանում ներկայացված է վերջինիս ակտիվության հիմնական մակարդակներում՝ գիտակցական, ենթագիտակցական և անգիտակցական:



Նկար 1. Գեշտալտ-կոնցեպտի կառուցվածքը:

Գեշտալտ-կոնցեպտների կառուցման և վերակառուցման առանձնահատկությունները

Անձի զարգացմանը զուգընթաց կառուցվում և վերակառուցվում է ԱԿՀ-ն, որում փոփոխությունները տեղի են ունենում գեշտալտ-կոնցեպտների մակարդակում: ԱԿՀ-ի զարգացումը մշտապես ուղեկցվում է վերակառուցման դրվագներով, սակայն ԱԿՀ-ի վերակառուցման առավել սուր դրվագները, որոնք խորապես շոշափում են անձի հիմնարար համոզմունքները, գիտակցվում են անձի կողմից որպես արժեքային և էկզիստենցիալ խնդիրներ և կոնֆլիկտներ, որոնք էլ իրենց հերթին հետևանք են «կոնցեպտուալ դիսոնանսի», որի մասին խոսք կգնա ենթագլուխներից մեկում [14]:

Գեշտալտ-կոնցեպտների կառուցումն ու վերակառուցումը մշտապես ենթարկված է ինքնապահպանման և ինքնաիրացման օրենքներին: Այդ պատճառով է, որ գեշտալտ-կոնցեպտների (функционирования) մեխանիզմների մեջ դրսևորվում են մարդու պահանջմունքները:

Պրոցեսուալ իմաստով գեշտալտ-կոնցեպտների կառուցումն ու վերակառուցումը ընթանում են անձի կողմից օբյեկտիվ իրականության ֆորմալ տրամաբանական, ռացիոնալ և դիալեկտիկական իմաստավորման և/կամ վերաիմաստավորման արդյունքում [14]:

Գեշտալտ-կոնցեպտների առանձնահատուկ դրսևորումները

Գեշտալտ-կոնցեպտներն ունեն մի շարք առանձնահատկություններ, որոնցից գլխավորներն են՝ ավարտվելու ձգտումը, ամբողջականությունն ու ինտեգրատիվությունը, մեկնաբանությունն ու կանխատեսումը, ձևն ու բովանդակությունը:

Գեշտալտ-կոնցեպտների ավարտվելու ձգտումը: Գեշտալտ-կոնցեպտը՝ ավարտվելու և ամբողջականանալու միտումով, ավարտուն վիճակի ձգտող (*Tendency to completion*) հոգեկան կառույց է: Այն մշտապես ձգտում է իր ավարտուն վիճակին՝ միևնույն ժամանակ ունենալով զարգացման իր ներքին տրամաբանությունն ու սցենարը: Գեշտալտ-կոնցեպտի այս առանձնահատկության մասնավոր դրսևորումն է Զեյգարնիկի էֆֆեկտը [29]:

Գեշտալտ-կոնցեպտների ամբողջականությունը և ինտեգրատիվությունը: Ինչպես նշվել էր քիչ վերևում, գեշտալտ-կոնցեպտը որոշակի հոգեկան կառույց է, որի ամբողջականությունն ու ինտեգրատիվությունն (*Completeness, Integrativeness*) այն է, որ վերջինս միավորում է իր մեջ հոգեվիճակը, այդ հոգեվիճակին տրվող գնահատականը կամ պիտակը և պատկերացումը կամ իմաստային դիրքորոշումը: Այս տեսանկյունից գեշտալտ-կոնցեպտը ներկայանում է որպես հոգեկանի ինտեգրալ բովանդակություն: Իսկ այդ ինտեգրացիայի կենտրոնում հայտնվում է և բաղադրիչները (հոգեվիճակ, պիտակ և պատկերացում) կապում է միմյանց կոնկրետ իմաստը, որն էլ իր հերթի կարող է հանդես գալ իրադարձության, առարկայի, գաղափարի, համոզմունքի դերի և այլնի տեսքով: Այլ կերպ ասած գեշտալտ-կոնցեպտը՝ որոշակի կոգնիցիաների, հույզերի և վարքային պատերնների ինտեգրացիա է՝ միավորված և կապված մեկը մյուսին մեկ կոնկրետ իմաստով [14]:

Այս տեսական դրույթն իր հաստատումն է գտել նաև էմպիրիկ հետազոտության մեջ: Ե.Մ.Ալեկսեևայի հետազոտություններից մեկի արդյունքում պարզվել է, որ «հոգեվիճակները ամրագրվում են կոնկրետ իրավիճակներում» և որ «Բացահայտվել են որոշակի հոգեվիճակների հետ այս կամ այն իրավիճակների/իրադրությունների միջնորդավորված (զուգորդություններ միջոցով) տարբերակման օրինաչափությունները: Դա պայմանավորված է նրանով, որ յուրաքանչյուր իրավիճակ/իրադրություն յուրահատուկ տեղ է գրավում աշխարհի սուբյեկտիվ պատկերում և զուգորդվում է հոգեկան վիճակների հետ: Հոգեկան վիճակները իրավիճակի/իրադրության հետ կազմում են ասոցիատիվ միասնություն [2]:

Գեշտալտ-կոնցեպտների՝ իրականության մեկնաբանության և կանխատեսման դրսևորումները: Մեկնաբանության (*Interpretation*) և կանխատեսման (*Prognostication*) մեխանիզմները սկսում են ձևավորվել կյանքի առաջին տարիներում՝ սոցիալական հարմարման, սոցիալականացման ընթացքում, այնուհետև աստիճանաբար բյուրեղանում են կամ փոփոխվում: Եվ դրանց հետ համահունչ էլ մարդը կազմակերպում է իր կենսագործունեությունը՝ կողմնորոշվելով ինքնապահպանման (անգիտակցորեն) և պրագմատիկության (գիտակցորեն) սկզբունքներով:

Անձի հետագա հարմարումը, սոցիալականացումը հանգեցնում է գոյություն ունեցող գեշտալտ-կոնցեպտների վերակառուցմանը և նորերի ստեղծմանը, այդպիսով իսկ՝ ողջ ԱԿՀ-ի վերակառուցմանը: Վերջինս օրինաչափ, սակայն բառիս լայն իմաստով սթրեսային

գործընթաց է, որի ելքը կարող է լինել կամ սալյուտոգեն և նպաստել անձի հետագա զարգացմանը, կամ պաթոգեն և պատճառ դառնալ տարատեսակ հոգեկան և վարքային խանգարումների [14]:

Մեկնաբանման մասին դեռ Շիլլերը գրում էր. «Ինչպե՞ս բացատրել նախապաշարումների այս աստիճան համատարած գերակայությունը և փիլիսոփայության ու փորձի լույսի ներքո ուղեղների այս մթագնումը: [...] Այսպիսով, եթե պատճառն իրերի մեջ չէ, ապա պետք է որ մարդկային հոգիներում լինի մի բան, որը խոչընդոտում է ճշմարտության ընկալմանը որքան էլ որ այն ուժգին լուսավորի և նրա (ճշմարտության) ճանաչմանը որքան էլ որ այն համոզիչ լինի» [53, էջ273): Խոչընդոտող այդ ուժը մեկնաբանման և կանխատեսման սուբյեկտիվության ուժն է, որը կոչված է պահպանելու այն համակարգի ամբողջականությունը, իմաստային հոմեոստազը, որի մասն է կազմում, տվյալ պարագայում կոնկրետ գեշտալտ-կոնցեպտը և կամ ողջ ԱԿՀ-ն: Ջ.Քելլին նշում էր, որ «ցանկացած մտածողություն մասամբ հիմնվում է նախորդող համոզմունքների վրա: Ամբողջական փիլիսոփայական կամ գիտական համակարգը ձգտում է ճշգրիտ ձևակերպել իրեն ռելեվանտ բոլոր նախորդող համոզմունքները» [73, էջ 5): Այդ է պատճառը որ նոր փաստերի, տեղեկատվության, փորձի հետ միասին գեշտալտ-կոնցեպտները ոչ միայն վերակառուցվում են, այլև այս կամ այն չափով և կամ իմաստով վերափոխում են այդ նոր փաստերը, տեղեկատվությունը, փորձը՝ ձգտելով հնարավորինս անփոփոխ թողել նախորդող համոզմունքները, այսինքն՝ մեկնաբանություններն ու կանխատեսումները:

Կ.Յասպերսը բավականին մանրամասն նկարագրում է այդ գործընթացի հոգեախտաբանական բնույթը. «Մոլորությունն ընկած է ոչ թե զգայական ապրման, այլ դատողության մեջ: Եթե հոգեկան հիվանդը հավաքում է փայլուն քարեր՝ մտածելով, որ դրանք թանկարժեք քարեր են կամ ասենք փայլուն մետաղադրամներ կարծելով որ դա ոսկի է կամ արծաթ, կամ եթե հոգեկան հիվանդ գիտնականը որոնում և ձեռք է բերում հնամաշ իրեր և ներկայացնում է այն որպես անտիկվարիատ, ապա զգայական ընկալման տեսանկյունից ըստ էության դա նույն երևույթն է, երբ երեխաները հավաքում են փայլող քարերը ենթադրելով որ դրանք ոսկի են և թանկարժեք իրեր, կամ երբ քիչ գիտակ մարդիկ սխալվում են որևէ զարդի բնույթի և արժեքի հարաբերակցության մեջ: Զգայական ընկալումը տվյալ դեպքում խախտված չէ սխալական է լոկ դատողությունը, ընկալվող օբյեկտի որևէ հատկության վերաբերյալ արված եզրակացությունը այնուհետև տեղափոխված դրա մնացյալ հատկությունների կամ իրերի էության վրա: Այստեղ առկա է ոչ թե դեպի սխալմունք տանող ընկալում այլ նորմալ ընկալման սխալ մեկնաբանում» [55, էջ 7):

Այս տեսանկյունից բոլորովին նորություն չի լինի ասելը որ այս տեսական դրույթը ընկած է ժամանակակից շատ հոգեթերապևտիկ ուղղությունների և առանձին մեթոդների հիմքում ինչպիսին են օրինակ կոգնիտիվ-վարքային թերապիան, ռացիոնալ-էմոտիվ վարքային թերապիան, էկզիստենցիալ հոգեթերապիան և այլն: Այսպիսով, գաղտնիք և բացահայտում չէ որ հենց որոշակի հոգեկան կառույցներն են («գեշտալտ-կենցեպտ» – հեղինակ, «դիրքորոշում» – Դ.Ն.Ուզնաձե, «աթթիթյուդ» – Գ.Օլպորտ, «անձնային կոնստրուկտներ» – Ջ.Քելլի, «անձնային իմաստներ» – Ա.Ն.Լեոնտև) որ պայմանավորում են ընկալման, մեկնաբանման և գնահատման գործընթացները:

Այդ հոգեկան կառույցների մասին Քելլին գրում է. «Մարդը նայում է աշխարհին թափանցիկ տրաֆարետների և շաբլոնների միջով, որոնք հենց ինքն էլ ստեղծում է, այնուհետև փորձում է

հարմարեցնել դրանց այն իրողություններին, որոնցից բաղկացած է այս աշխարհը: Հարմարումն այդ միշտ չէ որ լավն է լինում: Սակայն առանց նման շաբլոնների աշխարհը ներկայանում է նրան (մարդուն) այն աստիճան անշմարելի միասեռության տեսքով, որ նա ունակ չէ դրանից որևէ իմաստ քաղել: Ցանկացած մարդու համար սեփական շաբլոնների նույնիսկ վատ հարմարումը իրականությանը առավել օգտակար է քան դրանց բացակայությունը»: Քելլին այդ շաբլոններն անվանում էր «անձնային կոնստրուկտներ» [30, էջ 18). մենք դրանք նույնպես դիտարկում ենք որպես գեշտալտ-կենցեպտներ:

Այսպիսով, իրողությունների և իրականության ընդհանրապես, հարմարումը շաբլոններին, այսինքն գեշտալտ-կոնցեպտներին, անխուսափելիորեն բերում է ընկալման (որպես արդյունքի) այս կամ այն աստիճանի աղավաղմանը, որն էլ իր հերթին միշտ իրագործվում է հօգուտ արդեն իսկ գոյություն ունեցող մեկնաբանությունների և կանխատեսումների: Այս առումով Քելլին բերում է մի հետաքրքրիր օրինակ. «Հարևանի որպես թշնամու մեկնաբանության ճշմարտացիությանը հնարավոր է հաստատել ևս մեկ տեսակի կեղծ տրամաբանական եզրակացությամբ: Այս դեպքում մարդը դատում է հետևյալ կերպ. «Եթե հարևաս վերաբերվում է ինձ թշնամաբար ապա նա կձգտի իմանալ թե երբ կհայտնվեմ դժվար իրավիճակում, կհիվանդանամ կամ կդառնամ խոցելի ինչ-որ այլ բանում: Ես կհետևեմ նրան, որպեսզի համոզվեմ այդպես է թե ոչ»: Հաջորդ առավոտյան նա հանդիպում է հարևանին և վերջինս ողջունում է նրան իր ավանդական «Ինչպե՞ս են Ձեր գործերը» արտահայտությամբ: Եվ ինչպե՞ս այս դեպքում վարանել: Հարևանն անում է հենց այն ինչը որ կանխատեսվել էր թշնամաբար տրամադրված մարդու վերաբերյալ» (73, էջ 10): Այս օրինակում Քելլին պարզ կերպով նկարագրում է շաբլոնների հարմարման գործընթացը կոգնիտիվ մակարդակում: Բնականաբար գեշտալտ-կոնցեպտների մեկնաբանման և կանխատեսման դիալեպտիկական բնույթի փոխկապակցված գործընթացն շատ ավելի խորքային է և ներառում է նաև հուզական և վարքային բաղադրիչները, սակայն նկարագրության համար առավել հարմար է կոգնիտիվ չափումը:

Գեշտալտ-կոնցեպտների մեկնաբանման և կանխատեսման հատկությունների դրսևորման արդյունք որպես հանդես է գալիս անձի «ապագայի սցենարը» , որն էլ իր հերթին արտացոլում է անձի պատկերացումները, կանխատեսումները, պլաններն ու երազանքները ապագայի մասին և ապագայի հետ կապված [13]: Եվ որքան ռիգիդ է այդ սցենարը, այսինքն որքան որ մեծ է նախորդող համոզմունքների մասնաբաժինը շաբլոնների հարմարման գործընթացում, այդքան դժվար է անձնավորությանն ընդունել և ինտեգրացնել «անսպասելի» և «չպլանավորված», այսինքն ապագայի սցենարում թեկուզ որպես մտավախություն տեղ չգտած, իրողություններն ու իրադարձությունները: Համաձայն Քելլիի, եթե շաբլոնն ապահովում է իրադարձությունների կանխատեսման համարժեքությունը, ապա այն չի ոչնչացվում անձնավորության կողմից և պահպանվում է: Սակայն եթե մեկնաբանման արդյունքում կանխատեսումը չի հաստատվում՝ շաբլոնը ենթարկվում է վերանայման կամ ոչննչացման [54]: Որպես լրացում հարկ է նշել, որ գործում է և հակառակը՝ եթե մեկնաբանությունը չի համապատասխանում կանխատեսմանը կամ արդեն իսկ գոյություն ունեցող պատկերացումը (առավել վաղ մեկնաբանություններին) ապա հնարավոր է ընկալվող նյութի, տեղեկույթի իմաստաբանական էության բացասում և կամ աղավաղում: Այս առումով տեղին են Կ.Օբուխովսկու խոսքերն այն մասին, որ «եթե կարելի է խոսել անձի «հարմար-

ման» մասին, ապա պետք է հարմարվի նա իր ապագային այլ ոչ թե ներկային [42, էջ 51]:

Բերգերն ու Լուկմանը նշում են. «Առօրյա կյանքի ֆենոմենոլոգիական վերլուծությունը կամ ավելի ճիշտ դրա սուբյեկտիվ ընկալումը զերծ է մնում պատճառային և գենետիկական հիպոթեզներից այնպես, ինչպես և վերլուծվող երևույթների օնտոլոգիական կարգավիճակին վերաբերվող պնդումներից: Առօրեական գիտակցությունը պարունակում է առօրյա կյանքի շատ մինչ- և կվազիգիտական մեկնաբանություններ, որոնք համարվում են ինքնստինքյան ակնհայտ: Այդ պատճառով առօրյա իրականության նկարագրության մեջ անհրաժեշտ է առաջին հերթին ուշադրություն դարձնել հենց այդ մեկնաբանություններին՝ հաշվի առնելով դրանց ինքնստինքյան ակնհայտ համարվելու բնույթը թեկուզև ֆենոմենոլոգիական փակագծերի շրջանակներում» [18, էջ 39]:

Գեշտալտ-կոնցեպտի ձևը և բովանդակությունը: Գեշտալտին բնորոշ են նաև ձևն ու բովանդակությունը: Բովանդակությունը՝ անձնային կարևորություն ունեցող իմաստն է, իմաստաբանական բաղադրիչը, իսկ ձևը՝ այն արտաքին օբյեկտը որը մարմնավորում է այդ բովանդակությունը: Գեշտալտ-կոնցեպտի բովանդակությունը՝ իմաստաբանական-որակական, ներքին հատկանիշներ ունի (իմաստ, հույզեր, զգացմունքներ և այլն) մինչդեռ ձևը իմաստաբանական-քանակական, արտաքին (արտաքին տեսք, ֆիզիկական տվյալներ, խառնվածքային առանձնահատկություններ և այլն):

Այսպես օրինակ, «մայր» գեշտալտ-կոնցեպտի կամ դրանց խմբի բովանդակությունը կարող է մարմնավորել ոչ միայն անհատի կենսաբանական մայրը, այլև այն կինը (երբեմն նույնիսկ տղամարդը) ով ինչ-որ մի ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ իրականացրել է մոր գործառույթներ, դրսևորել է համապատասխան վերաբերմունք: Ընդ որում նույն մարդու համար կյանքի տարբեր հատվածներում միևնույն բովանդակությանը կարող է հանդես գալ տարբեր ձևերով:

Հոգեթերապիայում հայտնի տեղափոխության (*Transfer*) երևույթը գեշտալտ-կոնցեպտների այս հատկության դրսևորման օրինակ է, երբ այցելուն իրեն համար անձնային նշանակություն ունեցող գեշտալտ-կոնցեպտների բովանդակությունները (որպես կանոն «հայր» կամ «մայր») փորձում է մարմնավորել հոգեթերապևտով («հոգեթերապևտ») [14]:

Հասկացություն ընդհանուր կոնցեպտուալ տարածության մասին

Միջանձնային հարաբերություններում առաջնային տեղ է գրավող հաղորդակցվող, շփվող կողմերի միմյանց համարժեք ընկալման և հասկացման հիմնախնդիրը: Միջանձնային հարաբերությունների հոգեիմաստաբանական ուսումնասիրությունների արդյունքների վերլուծության արդյունքները հիմք են տվել առաջ քաշելու միջանձնային հարաբերություններում ընդգրկված, հաղորդակցվող, շփվող մարդկանց միջև գոյություն ունեցող ընդհանուր կոնցեպտուալ համակարգի մասին դրույթը: Համաձայն վերջինիս, մարդկանց միջև կառուցվող և գոյություն ունեցող հարաբերությունների առարկան և նպատակն ամփոփված են վերջիններիս ԱԿՀ-ում, գեշտալտ-կոնցեպտներում: Այս առումով միջանձնային հարաբերությունները դիտարկվում են որպես գեշտալտ-կոնցեպտների միջոցով իրականացվող շփում, երբ մարդիկ բառերով, արտահայտություններով և ոչ-խոսքային արտահայտչամիջոցներով փորձում են արտահայտել իրենց ներքին իմաստները, դրսևորել իրենց սեփական գեշտալտ-կոնցեպտները (*Concept Expression*): Ընդ որում հաղորդակցվող կողմերի միջև միշտ լինում են ընդհանուր գեշտալտ-կոնցեպտներ կամ իրենց իմաստային առումով մոտ գեշտալտ-կոնցեպտներ,

որոնց առկայությունն էլ հենց ապահովում է առավել հեշտ, արագ և համարժեք հասկացումը: Հաղորդակցվող կողմերի միջև գոյություն ունեցող այդ ընդհանուր գեշտալտ-կոնցեպտներն էլ և կամ գեշտալտ-կենցեպտների, ԱԿՀ-ի միջև եղած ընդհանրություններն էլ հենց կազմում են միջանձնային հարաբերություններում ներգրավված անձանց ընդհանուր կոնցեպտուալ տարածությունը (տես՝ Նկար 2 և 3) [15]:



Նկար 2. Ընդհանուր կոնցեպտուալ տարածությունը երկու անձանց միջև

ԿՀ1 – կոնցեպտուալ համակարգ 1
ԿՀ2 – կոնցեպտուալ համակարգ 2
ԸԿՏ – ընդհանուր կոնցեպտուալ տարածություն



Նկար 3. Ընդհանուր կոնցեպտուալ տարածությունը չորս անձանց միջև
ԿՀ1 – կոնցեպտուալ համակարգ 1
ԿՀ2 – կոնցեպտուալ համակարգ 2
ԿՀ3 – կոնցեպտուալ համակարգ 3
ԿՀ4 – կոնցեպտուալ համակարգ 4
ԸԿՏ – ընդհանուր կոնցեպտուալ տարածություն

«Կոնցեպտուալ տարածություն» հասկացությունն առավել լայն է քան «իմաստաբանական տարածություն» հասկացությունը: Վերջինս դիտարկվում է որպես օբյեկտային և սոցիալական իրականության որոշակի կերպով կարգավորված հատկանիշների և նկարագրությունների համակարգ [43], որպես կոնցեպտուալ համակարգի մի մաս որն իր արտահայտումն է գտել լեզվական նշանների միջոցով [40, էջ 82]: Միևնույն ժամանակ, իմաստաբանական տարածության միավոր որպես հանդես է գալիս նշանակությունը, որն ապահովում է փոխհասկացումը հաղորդակցման ժամանակ: Իսկ կոնցեպտուալ տարածության միավորը գեշտալտ-կոնցեպտն է [40, էջ 50]: Մինչդեռ նշանակությունը ապահովում է փոխհասկացումը, գեշտալտ-կոնցեպտը պատասխանատու է իրականության ըմբռնման համար [44, էջ 104]: Բացի այդ, գեշտալտ-կոնցեպտն իրենից ներկայացնում է իրականության արտացոլման և ճանաչողության արդյունք [44, էջ 92], որը ներկայանում է նաև որպես վարքի ներքին դետերմինանտ [72]:

Այդ առումով միջանձնային հարաբերությունների ընթացքն ու արդյունքները մեծապես պայմանավորված են ոչ միայն ընդհանուր իմաստաբանական տարածությամբ այլև մեծապես կախված են ֆենոմենոլոգիական տեսանկյունից առավել բարձր մակարդակի համակարգից՝ ընդհանուր կոնցեպտուալ տարածությունից:

Ընդհանուր կոնցեպտուալ տարածությունը յուրահատուկ կոնցեպտուալ համակարգ է, որն առաջանում է միջանձնային հարաբերություններում և որում ներգրավված են հաղորդակցվող կողմերի անհատական կոնցեպտուալ հա-

մակարգերը:

Ընդհանուր կոնցեպտուալ համակարգը հաղորդակցման կողմերի մոտ ենթադրում է ԱԿՀ-ներին և միմյանց կոհերենտ գեշտալտ-կոնցեպտների առկայություն: Գեշտալտ-կոնցեպտների կոհերենտությունն այս առումով ապահավում է ոչ միայն միջանձնային ընկալման համարժեքությունը, այլև իրականության ճանաչում և ըմբռնում տվյալ կոնցեպտուալ համակարգի իմաստաբանության և ֆենոմենոլոգիայի տեսակյունից, դիրքերից: Այս առումով, ընդհանուր կոնցեպտուալ տարածությունը ոչ միայն կարող է գեներացնել նոր գեշտալտ-կոնցեպտներ իրենում ներգրավված ԱԿՀ-ներում այլև փոփոխել, վերակառուցել գոյություն ունեցողները [15]:

Ընդհանուր կոնցեպտուալ տարածությունը, որպես կանոն, գոյանում է տարերայնորեն, սակայն միջանձնային հարաբերություններում վերջինս կարելի է կառուցել արհեստականորեն և նպատակաուղղված: Ընդհանուր կոնցեպտուալ տարածության նպատակաուղղված կառուցումը կարող է ծառայել ոչ միայն միջանձնային հարաբերություններում ներգրավված անձանց հաղորդակցման հեշտացմանը, միջանձնային ընկալման համարժեքությանն ու տեղեկույթի ըմբռնմանը, այլև սոցիալական համակարգի (խումբ, աշխատանքային կոլեկտիվ, թիմ և այլն) կառավարման օպտիմալացմանը: Գործնականում դա կարող է իր կիրառությունը գտնել ցանկացած տեսակի միջանձնային հարաբերություններում որը ենթադրում է երկու և ավելի մարդկանց հաղորդակցային փոխգործակցություն (օրինակ՝ կրթություն, հոգեթերապիա, գովազդ, մարդկային ռեսուրսների կառավարում և այլն): Ըստ էության, բարոյական և իրավական նորմերը, հայացքների համակարգերը (օրենքներ, կրոնական և փիլիսոփայական համակարգեր և այլն) ոչ այլ ինչ են քան լայն մասաների մոտ ընդհանուր կոնցեպտուալ տարածության ստեղծման դիրեկտիվ և նպատակաուղղված միջոցներ, և միևնույն ժամանակ՝ առանձին, մասնավոր կոնցեպտուալ համակարգերի ընդլայնում, տարածում [11; 15]:

Ընդհանուր կոնցեպտուալ տարածության ուսումնասիրության համար անհրաժեշտ է ուսումնասիրել դրանում ներգրավված առանձին մարդկանց գեշտալտ-կոնցեպտների կոհերենտությունը միմյանց ԱԿՀ-ների և գեշտալտ-կոնցեպտների նկատմամբ: Վերջինս էլ իրագործվում է հետազոտության ինչպես քանակական այնպես էլ որակական մեթոդների միջոցով, ինչպիսիք են օրինակ՝ իմաստաբանական տարբերակիչը [75], ֆոկուս-խմբերը, կոնտենտ-անալիզը և անձի իրականությունների համակարգի մոդելավորման մեթոդը [7]:

Գաղափար կոնցեպտուալ համատեղելիության եվ կոնցեպտուալ ճկունության մասին

Կոնցեպտուալ ճկունությունը և կոնցեպտուալ համատեղելիությունը միջանձնային հարաբերությունների հիմնական հոգեիմաստաբանական դետերմինանտներից են: Եթե կոնցեպտուալ համատեղելիությունը վերաբերվում է հարաբերվող բոլոր կողմերին ապա կոնցեպտուալ ճկունությունը կարող է վերաբերվել կողմերից միայն մեկին: Կոնցեպտուալ համատեղելիությունը ենթադրում միջանձնային հարաբերություններում ներգրավված և հաղորդակցվող կողմերի մոտ միմյանց համարժեք կամ կոհերենտության բարձր մակարդակն ունեցող գեշտալտ-կոնցեպտների առկայություն (տես՝ Նկար 4 և 5): Կոնցեպտուալ անհամատեղելիությունն իր հերթին ենթադրում է ուղիղ հակառակը՝ միմյանց ոչ համարժեք կամ կոհերենտության ցածր մակարդակն ունեցող գեշտալտ-կոնցեպտների առկայություն (տես՝ Նկար 6 և 7):



Նկար 4. Կոնցեպտուալ համապատասխանությունը երկու անձանց միջև՝ երկու գեշտալտ-կոնցեպտի օրինակով

ԿՀ1 – կոնցեպտուալ համակարգ 1
ԿՀ2 – կոնցեպտուալ համակարգ 2
A, B – կոնկրետ գեշտալտ-կոնցեպտներ



Նկար 5. Կոնցեպտուալ համապատասխանությունը երկու անձանց միջև՝ երկու գեշտալտ-կոնցեպտի օրինակով՝ ըստ իմաստաբանական տարածության մեջ վերջիններիս գրաված դիրքի

x, y, z – եռաչափ տարածության չափումները
A1 – առաջին անձի կոնկրետ՝ A գեշտալտ-կոնցեպտը
A2 – երկրորդ անձի կոնկրետ՝ A գեշտալտ-կոնցեպտը
B1 – առաջին անձի կոնկրետ՝ B գեշտալտ-կոնցեպտը
B2 – երկրորդ անձի կոնկրետ՝ B գեշտալտ-կոնցեպտը

Նշում. *իմաստաբանական տարածության մեջ որքան միմյանց մոտ են գտնվում տարբեր անձանց միևնույն գեշտալտ-կոնցեպտները (օրինակ՝ A)՝ այդքան բարձր է կոնցեպտուալ համապատասխանության մակարդակը:*



Նկար 6. Կոնցեպտուալ անհամապատասխանությունը երկու անձանց միջև՝ երկու գեշտալտ-կոնցեպտի օրինակով

ԿՀ1 – կոնցեպտուալ համակարգ 1
ԿՀ2 – կոնցեպտուալ համակարգ 2
A, B – կոնկրետ գեշտալտ-կոնցեպտներ



Նկար 7. Կոնցեպտուալ անհամապատասխանությունը երկու անձանց միջև՝ երկու գեշտալտ-կոնցեպտի օրինակով՝ ըստ իմաստաբանական տարածության մեջ վերջիններիս գրաված դիրքի

x, y, z – եռաչափ տարածության չափումները

A1 – առաջին անձի կոնկրետ՝ A գեշտալտ-կոնցեպտը

A2 – երկրորդ անձի կոնկրետ՝ A գեշտալտ-կոնցեպտը

B1 – առաջին անձի կոնկրետ՝ B գեշտալտ-կոնցեպտը

B2 – երկրորդ անձի կոնկրետ՝ B գեշտալտ-կոնցեպտը

Նշում. *իմաստաբանական տարածության մեջ որքան միմյանցից հեռու են գտնվում տարբեր ածանց միևնույն գեշտալտ-կոնցեպտները (օրինակ՝ A)՝ այդքան ցածր է կոնցեպտուալ համատեղելիության մակարդակը:*

Կոնցեպտուալ ճկունությունը ենթադրում է ԱԿՀ-ում սովորականից ավելի շատ գեշտալտ-կոնցեպտների առկայություն, որն էլ հնարավոր է դարձնում անձի կոնցեպտուալ համատեղելիությունը ավելի շատ թվով մարդկանց հետ: Մյուս տեսանկյունից, որքան ավելի շատ մարդկանց հետ է անձը կոնցեպտուալ տեսանկյունից համատեղելի այնքան ավելի ճկուն է կոնցեպտուալ տեսանկյունից (տես՝ Նկար 8) [3]:



Նկար 8. Կոնցեպտուալ ճկունությունը երկու գեշտալտ-կոնցեպտի օրինակով

ԿՀ1 – կոնցեպտուալ համակարգ 1

ԿՀ2 – կոնցեպտուալ համակարգ 2

ԿՀ3 – կոնցեպտուալ համակարգ 3

ԿՀ4 – կոնցեպտուալ համակարգ 4

A, B, C, D, E, F – կոնկրետ գեշտալտ-կոնցեպտներ

Հարվիի, Հանթի և Շրոդերի Կոնցեպտուալ համակարգերի տեսության մեջ կոնցեպտուալ ճկունությունը կրում է «կոնցեպտուալ մակարդակ» (*Conceptual Level*) անվանումը: Համաձայն հեղինակների, կոնցեպտուալ բարձր մակարդակ ունեցող անձինք առավել ճկուն են, կիրառում են ավելի շատ այլընտրանքային լուծումներ և ավելի տոլեռանտ են սթրեսի նկատմամբ [72; 80]:

Ընդհանուր պատկերացում կոնցեպտուալ դիսոնանսի մասին

Գեշտալտ-կոնցեպտների և ԱԿՀ կառուցման և վերակառուցման գործընթացները խթանվում և ուղեկցվում են կոնցեպտուալ դիսոնանսներով: Վերջինս հետևանք է մարդու ակտիվ ճանաչողական գործողությունների և անձի զարգացման անհրաժեշտ պայման է:

Կոցեպտուալ դիսոնանսը երկու և ավելի գեշտալտ-կոնցեպտների միջև եղած կոնֆլիկտն է և կամ գոյություն ունեցող գեշտալտ-կոնցեպտների և անմիջական փորձի միջև առաջացած անհամապատասխանությունը (տես՝ Նկար 9 և 10): Անձի մակարդակում դա կարող է դրսևորվել նոր փորձի և նախորդող փորձի միջև եղած կոնֆլիկտի, անհամապատասխանության տեսքով, որի արդյունքում քայքայվում կամ վերակառուցվում են գոյություն ունեցող գեշտալտ-կոնցեպտները, և/կամ առաջանում են նորերը (տես՝ Նկար 9): Անձի տեսանկյունից կոնցեպտուալ դիսոնանսը կոնկրետ իրականության անհամապատասխանությունն է կոնկրետ սպասելիքներին և կանխատեսումներին (և՛ կոգնիտիվ, և՛ հուզական, և՛ վարքային): Կոնցեպտուալ դիսոնանսը անձի կոնցեպտուալ ամբողջականության, հոմեոստատկ վիճակի խախտումն է [16; 61]:

Կոնցեպտուալ դիսոնանսը միջանձնային հարաբերություններում նույնպես բնութագրվում է որպես կոնֆլիկտ երկու և ավելի գեշտալտ-կոնցեպտների միջև, սակայն մի տարբերությամբ՝ դրանք կարող են մաս կազմել ոչ թե մեկ այլ միքանի տարբեր անձանց կոնցեպտուալ համակարգերի (տես՝ Նկար 10):



Նկար 9. Կոնցեպտուալ դիսոնանսը անձի մակարդակում

ԿՀ1 – կոնցեպտուալ համակարգ 1

A1, A2, A3 – կոնկրետ գեշտալտ-կոնցեպտներ



Նկար 10. Կոնցեպտուալ դիսոնանսը միջանձնային հարաբերություններում

ԿՀ1 – կոնցեպտուալ համակարգ 1

ԿՀ2 – կոնցեպտուալ համակարգ 2

A1, A2 – կոնկրետ գեշտալտ-կոնցեպտներ

Կոնցեպտուալ դիսոնանսն ակտիվացնում է անձնավորության պաշտպանական մեխանիզմները՝ անձի կոնցեպտուալ ամբողջականության, հոմեոստազի վերականգնման համար: Այս տեսանկյունից անձի պաշտպանական մեխանիզմները դիտարկվում են ոչ թե որպես վարքի չգիտակցվող կարգավորում (Զ.Ֆրոյդ), այլ որպես անհատի սեփական անձի մասին պատկերացումներին անմիջական փորձի համապատասխանեցման միջոց՝ ի հաշիվ գիտակցության մեջ այդ փորձի աղավաղման (Կ.Ռոջերս), որպես փախուստ էկզիստենցիալ տագնապից (Ռ.Մեյ) [17, էջ 32]:

Կոնցեպտուալ դիսոնանսի բովանդակային-գործընթացային էությունը

Կոնցեպտուալ դիսոնանսի արդյունքում առաջացած հոգեկան վիճակը բնութագրվում է որպես հոգենյարդային սթրես՝ վախի և տագնապի ապրմամբ: Ապրելով գոյություն ունեցող գեշտալտ-կոնցեպտների և նոր փորձի, իրականության անհամապատասխանությունը, այսինքն հասկանալով որ իր պատկերացումները, մեկնաբանություններն ու կախնատեսումները գործունակ և ճշգրիտ չեն ստեղծված կենսական իրավիճակում, անձը հասկանում է որ այդպիսով անհիմն է դառնում նաև իր ապագայի սցենարը, ապագայի իր տեսլականը: Իսկ քանի որ ապագայի սցենարը հանդիսանում է անորոշության, հետևաբար և անձնային տագնապայնության նվազեցման հիմնական միջոցներից մեկը, ապա վերջինիս ձախողումը արթնացնում է էկզիստենցիալ տագնապը: Անձը կորցնելով «վաղվա օրվա» իր տեսլականը, հետևաբար և վերջինիս նկատմամբ իր վստահությունը, կորցնում է այն միակ ուղենիշը որով կողմնորոշվում էր անորոշության մեջ: Անձի կեցությունը լցվում է վախով: Այս տեսանկյունից վախն ի հայտ է գալիս որպես մարդու հակազդում աշխարհի անհամապատասխանության, ցանկալիի և իրականի անհամապատասխանության հասկացմանը: Միևնույն ժամանակ, կոնցեպտուալ դիսոնանսի ժամանակ է հենց որ մարդն ընկալում է աշխարհը, կյանքը իր համար հնարավորինս օբյեկտիվ: «Մտքի պայծառեցումը ծնում է ընդարմացում («Мир прозрения рождает оцепенение»): Այսինքն մարդն ինչ-որ պահի հասկանում է գործերի իրական վիճակը և իր տեղն այդ ամենում: Վախն առաջանում է հենց սուբյեկտի և օբյեկտիվ իրավիճակի կորելյացիայի պահին» [28, էջ 96]:

Կոնցեպտուալ դիսոնանսի շտկման ախտածին ռազմավարությունները

Կոնցեպտուալ դիսոնանսի շտկման, անձի կոնցեպտուալ ամբողջականության վերականգնման համար ակտիվացող պաշտպանական մեխանիզմները կարող են իրագործվել երեք հիմնական ախտածին ռազմավարություններով. դրանք են.

· Իրականության աղավաղումը – այլընտրանքային ցանկալի իրականության կառուցում (խանգարման նևրոտիկ մակարդակ) կամ փախուստ դեպի մտացածին աշխարհներ (խանգարման փսիխոտիկ մակարդակ), երբ կոնցեպտուալ դիսոնանսը շտկելու, գոյություն ունեցող մեկնաբանություններն ու կանխատեսումները և իրականությունը միմյանց համապատասխանեցնելու համար աղավաղվում է հենց իրականությունը:

· Ֆորմալ տրամաբանության օրենքների և սկզբունքների աղավաղում, երբ երբ կոնցեպտուալ դիսոնանսը շտկելու նպատակով պաշտպանական մեխանիզմների ճնշման տակ աղավաղվում է տրամաբանական մտածողության ընթացքը և դատողությունների հետևողականությունը, պատճառա-հետևանքային կապերի ստեղծումը, և եզրահանգումների կայացումը:

· Նախորդող փորձի բացասումը, երբ ամբողջովին մերժվում է նախկինում ունեցած մեկնաբանության և կանխատեսման կարողությունը, և երբեմն էլ ընդունվում են նախորդող փորձի համեմատ բևեռային պատկերացումներ և արժեքներ [16; 61]:

Վերընշված ռազմավարությունները ախտածին են, որովհետև իրենց էությամբ իռացիոնալ են և առաջնում են ավտոմատ կերպով, իսկ ինչպես հայտնի է իռացիոնալ պատկերացումները, ավտոմատիզմները նպաստում են միայն տրամաբանության տրամաբանության դեֆիցիտարիզացիային, ճանաչողական գործընթացների դեֆորմացիային և տարաբնույթ հոգեկան խանգարումների [60; 67]:

Իրականության աղավաղման ռազմավարությունը: Այս երևույթի պատճառականության մասին Ռ.Մըքմալինը գրում է. «Այցելուներն աշխատում են ապահովել կոսոնանսը նույնիսկ եթե սխեման ինքն է բերում հուզական դիսթրեսի, որովհետև դիսոնանսն իրենց համար էլ ավելի սթրեսածին է և կարող է տագնապայնություն առաջացնել: Դրա հետևանքը հավասարազոր է այն բանին, եթե ասել որ «դժբախտ լինելը նորմալ է. եթե իրականությունն այսպիսինն է ապա սա քո միակ այլընտանքն է կյանքում»: Նույնիսկ եթե դա ճնշում է իրենց, այցելուները շարունակելու են հետևել այն մտքին, որ իրենք հիվանդ են, որովհետև իրենց դիրքորոշումներն ու վարքը հիմնված են նման ընկալման վրա. նրանք կպաշտպանեն իրենց «անառողջ» պնդումները ի հակառակ բազմաթիվ հակափաստարկների: Այստեղ կարևոր պահն այն է, որ իրենց «իրականությունը» նենգափոխված է հենց իրենց կողմից. այն արդյունքն է իրենց և շրջապատող աշխարհի մասին սխալ պատկերացումների» [38, էջ 141-148]: Սեփական սխեմայի կոսոնանսն ապահովելու համար, այսինքն սեփական ԱԿՀ-ի հոմեստատիկ վիճակն ապահովելու, սեփական անձի կոնցեպտուալ ամբողջականությունն պահպանելու համար մարդիկ պատրաստ են աղավաղել իրականությունը և կառուցել այլընտրանքային իրականություն, որովհետև վերջինիս (իրականության) համարժեք ընկալումը ավելի մեծ դիսթրեսի պատճառ կարող է հանդիսանալ: Սակայն այս ռազմավարությունը իռացիոնալ է և ախտածին:

Այլընտրանքային իրականության կառուցման անհրաժեշտություն առաջանում է իրողությունների պարբերաբար աղավաղման արդյունքում, երբ նախորդող փորձի (մեկնաբանությունների և կանխատեսման) և նոր փորձի միջև եղած անհապատասխանությունը մեծանում է: Այլընտրանքային իրակա-

նության կառուցման և այդ հենքի վրա տարաբնույթ հոգեախտաբանական համախտանիշների զարգացման մեխանիզմը հիանալի կերպով նկարագրում է Ա.Ադլերը. «Եվ միայն այնտեղ, որտեղ «Ես»-ը դուրս է գալիս հասարակությունից և մոտենում է մեկուսացմանը, երազանքում, որում ձգտում է հաղթանակ տանել մնացած բոլորի վրա, մահացու, հյուծիչ անորոշության անապատում, երբ տանջահար անող դանդաղությամբ վաճխանի ժամանակ ինքնստինքյան ծնվում է սփոփանք բերող fata morgana, նևրոզում և փսիխոզում, մեկուսացված և սեփական հեղինակության համար պայքարող մարդկանց մոտ սեղմակները թուլանում են և հոգին, ասես արբած, էքստատիկ եռանդով ոտք է դնում ընդհանրությունից[1] զուրկ անիրականի ճանապարհի վրա, կառուցվում է ուրիշ աշխարհ, որում հալյուցինացիան մեծ դերակատարում ունի, որովհետև տրամաբանությունը դառնում է քիչ կարևոր: Սակայն, հաճախ դեռ պահպանվում է ընդհանրության բավարար զգացողություն՝ հալյուցինացիան որպես ոչ իրական ընկալելու համար» [1, էջ 65-66): Այստեղից կարելի է հետևություն անել, որ ընդհանրության զգացումը, հանրության այլ անդամների տեսակետերը, ընկալումները և տեսլականները ընդունելու կարողությունը անհրաժեշտ պայման է ոչ միայն իրականության օբյեկտիվ ընմբռնման, հասկացման այլև հոգեկան առողջության պահպանման համար:

Զևական տրամաբանության օրենքների ու սկզբունքների աղավաղման ռազմավարությունը: Այս դեպքում, երբ կոնցեպտուալ դիսոնանսը շտկելու և անձի կոնցեպտուալ ամբողջականությունն ապահովելու նպատակով պաշտպանական մեխանիզմների ձնշման տակ աղավաղվում է տրամաբանական մտածողության ընթացքը և հետևաբար արդյունքը, անձի մոտ զարգանում է դեֆեկտային/դեֆիցիտար տրամաբանություն: Ֆորմալ տրամաբանության օրենքների և սկզբունքների աղավաղումը դրսևորվում է անձի ճանաչողական գործընթացներում, մասնավորապես մտածողության մեջ: Հայտնվելով մի իրավիճակում, երբ նախորդող փորձի, գոյություն ունեցող մեկնաբանությունների, կանխատեսումների և իրականության միջև անհամապատասխանությունը հնարավոր չէ «հարթել» իրողության աղավաղմամբ և ոչ էլ նախորդող փորձի ճշգրտության, ճշմարտացիության բացասմամբ՝ անձը «ստիպված է» լինում աղավաղել մտածողության գործընթացները ի վնաս տրամաբանվածության և ռացիոնալության: Արդյունքում անձնավորության մոտ ձևավորվում է յուրահատուկ ինքնավար, դեֆեկտիվ տրամաբանություն [16; 61]:

Նախորդող փորձի աղավաղման ռազմավարությունը: Նախորդող փորձի բացասման ռազմավարության էությունը կայանում է նրանում, որ անձը ինչ-որ պահից, կոնցեպտուալ դիսոնանսը հարթելու նպատակով, սկսում է մերժել նոր փորձին, նոր իրողությանը ռելեվանտ նախորդող փորձը, այսինքն գիտելիքների, մեկնաբանությունների, կանխատեսումների և այլնի ճշգրտությունը, ճշմարտացիությունը: Բացասելով նախորդող փորձը անձն անմնացորդ ընդունում է նոր փորձի ճշգրտությունը, ճշմարտացիությունը[16; 61]:

Կոնցեպտուալ դիսոնանսի նորմալ շտկման հիմնական առանձնահատկությունները: Նորմայում կոնցեպտուալ դիսոնանսը պետք է հարթվի ոչ թե շնորհիվ իրականության աղավաղման (նոր փորձի աղավաղում) կամ գոյություն ունեցող պատկերացումների բացասման (նախորդող փորձի բացասում) և ոչ էլ տրամաբանության օրենքների աղավաղման (կոնցեպտուալիզացիայի գործընթացի աղավաղում) այլ իրականության ռացիոնալ ըմբռնման և այլընտրանքային մեկնության (նոր փորձի

1 այստեղ Ադլերը «ընդհանրություն» ասելով նկատի ունի «համայնք», «հանրություն»

մեկնաբանություն տարբեր տեսանկյուններից), գոյություն ունեցող մեկնությունների և կանխատեսումների այլընտրանքայնության ապահովման (նախորդող փորձի այլընտրանքային տարբերակների կառուցում) և տրամաբանության օրենքների խիստ պահպանման (կոնցեպտուալիզացիայի գործընթացի ռացիոնալություն և տրամաբանվածություն) ճանապարհով [16; 61]:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Адлер А. Практика и теория индивидуальной психологии: Лекции по введению в психотерапию для врачей, психологов и учителей. – М.: Изд-во Института Психотерапии, 2002. – 214с.
2. Алексеева Е.М. К проблеме исследования личностных смыслов и смысловых установок // Молодежь и наука: реальность и будущее: Материалы II Международной научно-практической конференции, 3 марта 2009 г., г. Невинномысск / Ред.кол.: В.А.Кузьмищев, О.А.Мазур, Т.Н.Рябченко, А.А.Шатохин: в 9 томах. – Невинномыск: НИЭУП, 2009. – Том II: психология. – 2009. – 541 с.; – с. 35-37.
3. Аракелян Т.А., Бегоян А.Н. Мониторинг межличностных компетенций ординаторов отделения пластической хирургии: оценка концептуальной гибкости врача и адекватности восприятия проблемы пациента врачом // Психолого педагогические механизмы и средства формирования общекультурных, профессиональных и личностных компетентностей в условиях современных социокультурных изменений: теоретико методологический и практико ориентированный аспекты: сборник тезисов и статей Всероссийской молодежной конференции 14–15 сентября 2012 года / под ред. К. С. Бажина, Г. И. Симоновой, Е. А. Ходыревой. – Киров: Изд во ВятГГУ, 2012. – 271 с.; – с. 277-279.
4. Артемьева Е.Ю. Основы психологии субъективной семантики / Под. Ред. И.Б. Ханиной. - М.: Наука; Смысл., 1999. – 350 с.
5. Артемьева Е.Ю. Психология субъективной семантики. М.: Изд-во „ЛКИ“,- 2007. –136 с.
6. Бегоян А.Н. Феномен “воображаемого партнера” – игра или галлюциноз? // Психология – наука будущего: Материалы II международной конференции молодых ученых, 30-31 октября 2008 г., Москва / Под ред. А.Л.Журавлева, Е.А.Сергиенко, А.С.Обухова. – М.: Изд-во “Институт психологии РАН”, 2008. – 543 с.; – с. 40-43.
7. Бегоян А.Н. Теория системы реальностей личности как метод исследования образа мира личности // Актуальные проблемы гуманитарных и естественных наук, № 3 2009 (Том I), г.Москва, РФ; – с.148-152.
8. Бегоян А.Н. Образ мира и система реальностей личности // Молодежь и наука: реальность и будущее: Материалы II Международной научно-практической конференции, 3 марта 2009 г., г. Невинномысск / Ред.кол.: В.А.Кузьмищев, О.А.Мазур, Т.Н.Рябченко, А.А.Шатохин: в 9 томах. – Невинномыск: НИЭУП, 2009. – Том II: психология. – 2009. – 541 с.; – с. 69-72.
9. Бегоян А.Н. Конструирование ребенком альтернативной/желаемой реальности // Материалы международной научно-практической конференции молодых ученых «Психология XXI века» 23—25 апреля 2009 года, Санкт-Петербург / Под науч. ред. Н.В. Гришиной — СПб: Издат-во С.-Петерб. ун-та, 2009. — 360 с.; – с. 14-16.
10. Бегоян А.Н. Проблема исследования личности: терхлокусный подход // Современные проблемы науки, образования и производства: Материалы Международной научно-практической конференции студентов, аспирантов, специалистов, преподавателей и молодых ученых, 29 мая 2009: В 2 т. Т.1. – Н.Новгород: НФ УРАО, 2009 – 448 с.; – с. 70-72.
11. Бегоян А.Н. Концептуальная система личности // Интегративная психотерапия сегодня: Материалы I Международной научно-практической конференции (26-27 ноября 2009 г.) / Под ред. Р.А. Погосяна – г.Ереван: Изд-во “Кавказский центр ирановедения”, 2010 – 200 с. – с. 15-22.
12. Бегоян А.Н. Введение в концептуальную психотерапию // Психотерапия, №6 (90) 2010г.; – с. 50-54.
13. Бегоян А.Н. Моделирование и конструирование альтернативных сценарий: техника “я режиссер” при ломке сценария будущего // Психология сегодня: сборник научных статей 13-й Всерос. науч.-практ. конф., Екатеринбург, 20-21 апр. 2011 г. / отв. за вып. А.М. Павлова; ФГАОУ ВПО «Рос. гос. проф.-пед. ун-т». Екатеринбург, 2011. 273 с.; – с. 10-13.

14. Бегоян А.Н. Понятие гештальт-концепта: Когнитивно-Концептуальная Терапия // Актуальные вопросы педагогики, психологии, социологии: Международная научно-практическая конференция / под.ред. Цахаевой А.А и Муртазалиевой М.М.– Махачкала, 2012.– выпуск 1, Том 2; – с. 135-139.
15. Бегоян А.Н. Общее концептуальное пространство как предпосылка адекватной социальной перцепции и эффективной социальной коммуникации // Актуальные проблемы прикладной социальной психологии: сборник докладов I Материалы международной научно-практической конференции 27-28 декабря 2011г. – СПб.: Издательство Санкт-Петербургского университета управления и экономики, 2012. – 376.: ил.; – с. 207-209.
16. Бегоян А. Н. Когнитивное конструирование реальности: три техники из когнитивно-концептуальной терапии / А. Н. Бегоян. - Ер.: Авторское издание, 2014. - 64 с.
17. Берберян А.С. Общеметодологическая близость и интегральное единство экзистенциализма и гуманистической психотерапии // Интегративная психотерапия сегодня: Материалы I Международной научно-практической конференции (26-27 ноября 2009 г.) / Под ред. Р.А. Погосяна – г.Ереван: Изд-во "Кавказский центр ирановедения", 2010 – 200 с; – с. 29-34.
18. Бергер П., Лукман Т. Социальное конструирование реальности. Трактат по социологии знания. — М.: "Медиум", 1995. – 323 с.
19. Берулава Г. А. Образ мира как мифологический символ. – М. : Педагогическое общество России, 2001. – 236 с.
20. Богпомочева О.А. Особенности образа мира у одаренных подростков // Психологическая наука и образование, #4, 2006.; – с. 5-22.
21. Бор Н. Атомная физика и человеческое познание. – М.: Издательство иностранной литературы, 1961. – 151 с.
22. Буева Л.П. Человек: деятельность и общение. М.: „Мысль", 1987. - 216 с.
23. Витгенштейн Л. Философские исследования // Новое в зарубежной лингвистике. М. Вып. XVI, 1985.; – с. 79-128.
24. Выготский Л.С. Собрание сочинений: В 6-ти т. Т.3. Проблемы развития психики / Под ред. А. М. Матюшкина. - М.: Педагогика, 1983. – 368 с.
25. Физика и философия. Часть и целое. - М.: Наука, 1989. – 400 с.
26. Гейзенберг В. Избранные философские работы: Шаги за горизонт. Часть и целое. СПб.: Наука, 2005. – 572 с.
27. Грицанов А.А. История философии. Энциклопедия, Мн.: Интерпрессервис; Книжный Дом, 2002. – 1376 с.
28. Даллакян К.А. Воля как феномен энвайронментального отношения, Уфа: "Талер", 1998. – 140 с.
29. Зейгарник Б.В. Патопсихология. — Издательство Московского университета, 1986. – 288 с.
30. Келли Дж. Теория личности. Психология личных конструктов. СПб.: Речь, 2000. – 249 с.
31. Кемеров В.Е. Проблема личности: методология исследования и жизненный смысл, М.: Политиздат, 1977. – 256 с.
32. Кубрякова Е. С., Демьянков В. З., Панкрац Ю. Г., Лузина Л. Г. Краткий словарь когнитивных терминов. М.:Изд-во МГУ, 1996. – 245с.
33. Леонтьев А.Н. Избранные психологические произведения: В 2-х т. Т.I — М.: Педагогика, 1983. – 392 с.
34. Леонтьев А.Н. Избранные психологические произведения: В 2-х т. Т. II — М.: Педагогика, 1983. – 320 с.
35. Леонтьев Д.А. Психология смысла: природа, строение и динамика смысловой реальности. 2-е испр.изд. – М.: Смысл, 2003. – 487 с.
36. Ломов Б. Ф. Методологические и теоретические проблемы психологии. М.: Наука, 1984. – 444 с.
37. Лотман Ю. М. Семиосфера. – С.-Петербург: «Искусство–СПБ», 2000.
38. МакМаллин Р. Практикум по когнитивной терапии: Пер. с англ. – СПб.: Речь, 2001. – 560 с.
39. Малкина-Пых И.Г. Справочник практического психолога, М.: Эксмо, 2008.
40. Маслова В.А. Когнитивная лингвистика: учеб.пособие / В.А.Маслова. – 3-е изд., перераб. и доп. – Минск: ТетраСистемс, 2008. – 272 с.
41. Налимов В.В. Вероятностная модель языка: О соотношении естественных и искусственных языков. М.: Наука, 1979. – 303 с.
42. Обуховский К. Психологическая теория строения и развития личности // В кн.: Психология формирования и развития личности. - М.: Наука, 1981, с. 45-67.

43. Петренко В.Ф. Психосемантика сознания. М.: изд-во МГУ, 1988. – 208 с.
44. Попова, З.Д. Когнитивная лингвистика / З.Д.Попова, И.А.Стернин. – М: АСТ:Восток – Запад, 2007. – 314, [6] с.
45. Рубинштейн С.Л. Бытие и сознание. О месте психического во всеобщей взаимосвязи явлений материального мира. - М.: Изд-во АН СССР, 1957. – 328 с.
46. Руднев В.П. Прочь от реальности: Исследования по философии текста. II. - М.: «Аграф», 2000. – 432 с.
47. Сапогова Е.Е. Игры с самим собой: Я-метафоры в содержании индивидуальных нарративов субъекта // Вторая Всероссийская научно-практическая конференция по экзистенциальной психологии 1-5 мая 2004 г. (Звенигород): Материалы сообщений / Под ред. Д.А. Леонтьева. -- Москва: Смысл, 2004.; – с. 104-107.
48. Сапогова Е.Е. Анализ Я-концептов и Я-метафор в содержании индивидуальных нарративов субъекта // Прикладная психология: достижения и перспективы / Под ред. Л.А.Мирской, Т.Ю.Синченко, В.Г.Ромека. - Ростов-на-Дону: Фолиант, 2004.; – с. 50-79.
49. Смирнов С.Д. Мир образов и образ мира // Вестник Моск. ун-та. Сер.14: Психология. 1981. №2.; – с. 15-29.
50. Смирнов С.Д. Психология образа: проблема активности психического отражения. М.: Изд-во Московского университета, 1985. - 233 с.
51. Телия В. Н. Русская фразеология: Семантический, прагматический, культурологический аспекты. М., 1996. – 284 с.
52. Хабермас Ю. Познание и интерес // Философские науки, 1990, № 1 .; - с. 91-96.
53. Шиллер Ф. Собр. соч. в 7 тт. Т. 6 – М., 1957. – 793 с.
54. Яровицкий В. Сто великих психологов, М.: ВЕЧЕ, 2004. – 432 с.
55. Ясперс К. Собрание сочинений по психопатологии в 2 тт. Т. 2: «Ложные восприятия», «Феноменологическое направление исследования в психопатологии», «Каузальные и «понятные» связи между жизненной ситуацией и психозом при dementia praecox (шизофрения)». — М.: Издательский центр «Академия»; СПб.: «Белый Кролик», 1996. - 256с.
56. Altman, I. & Taylor, D. (1973). Social penetration: The development of interpersonal relationships. New York: Holt, Rinehart and Winston.
57. Arias-Carrión O, Pöppel E (2007). Dopamine, learning and reward-seeking behavior. Acta Neurobiologiae Experimentalis 67 (4): 481–488.
58. Barsalou, L.W. (2008). Cognitive and Neural Contributions to Understanding the Conceptual System. Current Directions in Psychological Science, Volume 17—Number 2: 91-95.
59. Baxter, L. A. (1988). A dialectical perspective of communication strategies in relationship development. In S. Duck. (Ed.) Handbook of personal relationships (pp. 257–273). New York: Wiley.
60. Beck, A.T. (1975). Cognitive Therapy and the Emotional Disorders. International Universities Press, 1975.
61. Begoyan, A.N. (2014). An Anatomy of Psycho-trauma: Pain, Illness and Recovery. International Journal of Psychotherapy, Vol. 18, No. 3: 41-51.
62. Berger, C. R., Calabrese, R. J. (1975). Some Exploration in Initial Interaction and Beyond: Toward a Developmental Theory of Communication. Human Communication Research, 1: 99–112.
63. Boelen, P.A. & Carleton, R.N. (2012). Intolerance of uncertainty, hypochondriacal concerns, obsessive-compulsive symptoms, and worry. The Journal of Nervous and Mental Disease. 2012 Mar; 200(3): 208-213.
64. Carleton, R.N., Mulvogue, M.K., Thibodeau, M.A., McCabe, R.E., Antony, M.M. & Asmundson, G.J. (2012). Increasingly certain about uncertainty: Intolerance of uncertainty across anxiety and depression. Journal of Anxiety Disorders. 2012 Apr;26(3):468-479.
65. Carson, R. (1969). Interaction concepts of personality. Chicago: Aldine.
66. Caspar, F. (1995). Plan Analysis. Toward optimizing psychotherapy. Seattle: Hogrefe-Huber.
67. Ellis, A. & Dryden, W. (2007). The Practice of Rational Emotive Behavior Therapy. NY: Springer.
68. Fedigan, L. (1973). Conceptual Systems Theory And Teaching. Educational Leadership, May.
69. Gentes, E.L. & Ruscio, A.M. (2011). A meta-analysis of the relation of intolerance of uncertainty to symptoms of generalized anxiety disorder, major depressive disorder, and obsessive-compulsive disorder. Clinical Psychology Review, 31(6): 923-933.
70. Godel, K. (1931) Uber formal unentscheidbare Satse der Principia Mathematica und verwandter Systeme 1. Monatschifte fur Mathematik und Physik, 38.

71. Grupe, D.W. & Nitschke, J.B. (2013). Uncertainty and anticipation in anxiety: an integrated neurobiological and psychological perspective. Nature Reviews Neuroscience, 14(7): 488-501.
72. Harvey, O. J. , Hunt, D. E. & Schroeder, H. M. (1961). Conceptual Systems and Personality Organization. New York: Wiley.
73. Kelly G. (1991). The psychology of personal constructs. 2nd printing. Routledge, London, New York.
74. Murphy, G. (2002). The Big Book of Concepts. Massachusetts Institute of Technology.
75. Osgood, C.E., Suci, G. & Tannenbaum, P. (1957). The Measurement of Meaning. University of Illinois Press.
76. Rawlins, W. K. (1989). A dialectical analysis of the tensions, functions, and strategic challenges of communication in young adult friendships. In J.A. Anderson (Ed.), Communication Yearbook 12 (pp. 157-189). Newbury Park, CA: Sage.
77. Shannon, C.E. & Weaver, W. (1963). The Mathematical Theory of Communication. Urbana, IL: University of Illinois Press.
78. Schutz, W.C. (1958). FIRO: A Three-Dimensional Theory of Interpersonal Behavior. New York, NY: Rinehart
79. Strathearn, L. (2011). Maternal Neglect: Oxytocin, Dopamine and the Neurobiology of Attachment. Journal of Neuroendocrinology, 23: 1054–1065.
80. Victor, J.B. & Harootunian, B. (1971). Conceptual Systems Theory and Attitudes Toward Teaching. Paper presented at AERA annual meeting, New York.

ПСИХОСЕМАНТИЧЕСКИЙ ПОДХОД К МЕЖЛИЧНОСТНЫМ ОТНОШЕНИЯМ

АРМАН БЕГОЯН

Аспирант АГПУ им. Хачатура Абовяна,
Главный специалист, Психологическая служба «Хильфманн»

В статье представлен психосемантический подход к межличностным отношениям, который основывается на теоретических представлениях О. Харви, Д. Ханта и Х. Шродера, а также, Л.С. Выготского, А.Н. Леонтьева, Д.Н. Леонтьева, В.В. Налимова и других. Психосемантический подход к межличностным отношениям проявляется с помощью таких понятий, как концептуальная система личности и гештальт-концепты, концептуальный диссонанс, общее концептуальное пространство и концептуальная гибкость. Обсуждаются основные патогенные стратегии сглаживания концептуального диссонанса - искажение реальности, искажение законов и принципов формальной логики, отрицание предыдущего опыта.

PSYCHO-SEMANTIC APPROACHES TO INTERPERSONAL RELATIONSHIPS

ARMAN BEGOYAN

PhD Student, Khachatur Abovian Armenian State Pedagogical University,
Chief Specialist, Hilfmann Psychological Services Center

The article presents a psychosemantic approach to interpersonal relations, which is based on the theoretical concepts of O. Harvey, D. Hunt, & H. Schroeder, as well as, L.Vygotski, A. N. Leontev, D.N. Leontev, V. Nalimov, and others. A psychosemantic approach to interpersonal relations manifests through the concepts of person's conceptual system, gestalt-concepts, conceptual dissonance, common conceptual space, and conceptual flexibility. The main pathogenic strategies of conceptual dissonance smoothing, like distortion of existing reality, distortion of the laws and principles of formal logic, and rejection of previous experience, are also discussed.